Պայմանագրի կողմ

ՀՀ Քաղաքացի՝ Գասպարյան Ավգեն Արմենակի
Հասցե՝ ք. Երևան,Ֆրունզեի 8, բն.14

Անձ. AK 0476474, տրված 003 կողմից, 02.04.2010թ

ID քանկ, Հ/Հ11800046841300

Պատվիրատու

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«20» «12» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2018թ.
Պայմանագրի համարը՝ « »
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____________________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Դատատեխնիկական կրկնակի փորձաքննություն, թիվ 12884417 քրեական գործ | | | 1 քր. գործ | | 20.12.2018թ | 80.0 | 20 բանկային օրվա ընթացքում |
| | **Ընդամենը** | | | | | | **80.0** | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ծառայությունը հանձնեց**

/Ա. Գասպարյան/

ստորագրություն

Կ.Տ.

**Ծառայությունը ընդունեց**

ստորագրություն

Կ.Տ.

## ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՀՀ Քաղաքացի՝ Գասպարյան Ավգեն Արմենակի(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018 թ. Դեկտեմբերի 20 -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Դատատեխնիկական կրկնակի փորձաքննություն, թիվ 12804216 քրեական գործ | դրամ | 1 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

Գասպարյան Ավգեն
ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
փորձագետ ճանաչելու մասին

99

27.06.2018թ. ք. Երևան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մաթևոսյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 12884417 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ. դեկտեմբերի 1-ին՝ ժամը 09-ի սահմաններում Անյա Եղիազարյանը Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 30 շենքի 1-ին մուտքի 1-ին հարկում վերելակ մուտք գործելու նպատակով սեղմել է կանչի կոճակը, որից հետո առանց վերելակի խցիկի բացվել են հորանի մուտքի դռները, որպիսի հանգամանքը չնկատելով Ա.Եղիազարյանը բացված դռներից քայլ է կատարել ներս և շուրջ 2 մետր բարձրությունից վայր ընկել հորան՝ ստանալով կրծքավանդակի փակ, բութ վնասվածքի, աջից 4-5-րդ կողոսկրերի կոտրվածքների ձևով միջին ծանրության առողջական վնաս:

Դեպքի առթիվ 28.12.2017թ-ին ՀՀ ոստիկանության ԵՔՎ Էրեբունու բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12884417 քրեական գործը:

28.12.2017թ. որոշմամբ Անյա Եղիազարյանը ճանաչվել է տուժող, հետաքննության ընթացքում հայտնելով, դեպքի վերաբերյալ քննությանը հետաքրքրող անհրաժեշտ տվյալներ:

Ա.Եղիազարյանի վերաբերյալ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որպես վկա հարցաքննվել են Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 30 բնակիչները, ինչպես նաև <<Կենտրոն>> համատիրության վերալակների բաժնի աշխատակիցները, նշանակվել է դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱԻՆ <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Իր կողմից մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ տուժող Ա.Եղիազարյանը հայտնել է, որ դեպքի օրն իր կողմից մշակված կարտոֆիլը վաճառելու նպատակով գտնվել է Երևան քաղաքում, այդ նպատակով այցելել է նաև Մ.Խորենացի փողոցի 30 շենքում բնակվող ազգականին, որի ժամանակ ցանկանալով մուտք գործել վերելակ՝ մթության պատճառով չի նկատել վերալակի խցիկի բացակայությունը և ընկնելով հորանի մեջ ստացել է մարմնական վնասվածքներ:

Ստացված դատաբժշկական փորձաքննության 2840/հ եզրակացության համաձայն. <<...Անյա Եղիազարյանի մարմնական վնասվածքներն, ըստ փորձաքննությանը ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ կրծքավանդակի փակ, բութ վնասվածքի, աջից՝ 4-5-րդ կողոսկրերի կոտրվածքների ձևով, պատճառվել են՝ բութ առարկաների ներգործությամբ, հնարավոր է՝ որոշմամբ նշված ժամկետում, որոնք իրենց համակցությամբ առողջությանը պատճառել են՝ միջին ծանրության վնաս, առողջության

պատճառական կապի մեջ գտնվող հետևանքների տևողությունը քանմեկ օրից ավելի: 100
Համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ Անյա Եղիազարյանի մոտ ախտորոշվել է նաև ձախ ոլոքի միջկոճային բարձրության հնացած պոկումային կոտրվածք, ինչը տվյալ դեպքում ենթակա չէ դատաբժշկական գնահատականի: Եթե հետագայում փորձաքննվողը ներկայանա ԴԲԳԳԿ և ի հայտ գան նոր տվյալներ, ապա հնարավոր է «Հետևություններ» - ում լինեն փոփոխություններ...>>:

12.06.2018թ. քննչական բաժին է ստացվել փորձագետի թիվ 1108 եզրակացությունը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ եզրակացությունը հիմնավորված չէ, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել նշանակել նոր փորձաքննություն:

Նախաքննության ընթացում պարզվել է նաև, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս Ավգեն Գասպարյանը տիրապետում է հատուկ մասնագիտական գիտելիքների նշված փորձաքննությունն իրականացնելու համար:

Այսպիսով, նկատի ունենալով, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս Ավգեն Գասպարյանն ունի տեխնիկական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, միաժամանակ շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55, 85, 243, 249 և 251 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1) Թիվ 12884417 քրեական գործով կրկնակի դատատեխնիկական փորձաքննություն կատարման համար փորձագետ ճանաչել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մասնագետ Ավգեն Արմենակի Գասպարյանին:
2) Որոշման մասին հայտնել Ա.Գասպարյանին, վերջինիս պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ Ա.Մաթևոսյան

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կրկնակի դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

29-ը հունիսի 2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մ.Մաթևոսյանս, վերանայելով վարույթիս թիվ 12884417 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ. դեկտեմբերի 1-ին՝ ժամը 09-ի սահմաններում Անյա Եղիազարյանը Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 30 շենքի 1-ին մուտքի 1-ին հարկում վերելակ մուտք գործելու նպատակով սեղմել է կանչի կոճակը, որից հետո առանց վերելակի խցիկի բացվել են հորանի մուտքի դռները, որպիսի հանգամանքը չնկատելով Ա.Եղիազարյանը բացված դռներից քայլ է կատարել ներս և շուրջ 2 մետր բարձրությունից վայր ընկել հորան՝ ստանալով կրծքավանդակի փակ, բութ վնասվածքի, աջից 4-5-րդ կողոսկրերի կոտրվածքների ձևով միջին ծանրության առողջական վնաս:

Դեպքի առթիվ 28.12.2017թ-ին ՀՀ ոստիկանության ԵՔՎ Էրեբունու բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12884417 քրեական գործը:

28.12.2017թ. որոշմամբ Անյա Եղիազարյանը ճանաչվել է տուժող, հետաքննության ընթացքում հայտնելով, դեպքի վերաբերյալ քննությանը հետաքրքրող անհրաժեշտ տվյալներ:

Ա.Եղիազարյանի վերաբերյալ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որպես վկա հարցաքննվել են Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 30 բնակիչները, ինչպես նաև <<Կենտրոն>> համատիրության վերալակների բաժնի աշխատակիցները, նշանակվել է դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱԻՆ <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Իր կողմից մարմնական վնասվածքներ ստանալու վերաբերյալ տուժող Ա.Եղիազարյանը հայտնել է, որ դեպքի օրն իր կողմից մշակված կարտոֆիլը վաճառելու նպատակով գտնվել է Երևան քաղաքում, այդ նպատակով այցելել է նաև Մ.Խորենացի փողոցի 30 շենքում բնակվող ազկականին, որի ժամանակ ցանկանալով մուտք գործել վերելակ՝ մթության պատճառով չի նկատել վերալակի խցիկի բացակայությունը և ընկնելով հորանի մեջ ստացել է մարմնական վնասվածքներ:

Ստացված դատաբժշկական փորձաքննության 2840/հ եզրակացության համաձայն. <<...Անյա Եղիազարյանի մարմնական վնասվածքներն, ըստ

կրծքավանդակի փակ, բութ վնասվածքի, աջից՝ 4-5-րդ կողոսկրերի կոտրվածքների 102
ձևով, պատճառվել են՝ բութ առարկաների ներգործությամբ, հնարավոր է՝ որոշմամբ նշված ժամկետում, որոնք իրենց համակցությամբ առողջությանը պատճառել են՝ միջին ծանրության վնաս, առողջության տևական քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող հետևանքների տևողությունը քսանմեկ օրից ավելի: Համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ Անյա Եղիազարյանի մոտ ախտորոշվել է նաև ձախ ոլոքի միջկոճային բարձրության հնացած պոկումային կոտրվածք, ինչը տվյալ դեպքում ենթակա չէ դատաբժշկական գնահատականի: Եթե հետագայում փորձաքննվողը ներկայանա ԴԲԳԳԿ և ի հայտ գան նոր տվյալներ, ապա հնարավոր է «Հետևություններ» - ում լինեն փոփոխություններ...>>:

12.06.2018թ. քննչական բաժին է ստացվել փորձագետի թիվ 1108 եզրակացությունը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ եզրակացությունը հիմնավորված չէ, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել նշանակել նոր փորձաքննություն:

Նախաքննության ընթացում պարզվել է նաև, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս Ավգեն Գասպարյանը տիրապետում է հատուկ մասնագիտական գիտելիքների նշված փորձաքննությունն իրականացնելու համար:

27.06.2018թ. որոշմամբ Ա.Գասպարյանը ճանաչվել է փորձագետ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք էական նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ հոդվածների պահանջներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1) Սույն քրեական գործով նշանակել լրացուցիչ դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել փորձագետ Ավգեն Արմենակի Գասպարյանին՝ վերջինիս նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2) Փորձագետի լուծմանն առաջադրել ներքոհիշյալ հարցերը՝

- Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 30 շենքի 1-ին մուտքի առկա վերելակը գործարանային արտադրության է, թե՝ ոչ, եթե այո ինչ ապրանքանիշի է, որ երկրի և տարեթվի արտադրության, որքան ժամանակ է տեղադրված եղել:
- 2017թ. Դեկտեմբերի 1-ի դրությամբ պիտանի եղել է նպատակային շահագործման համար, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի թերություններ է ունեցել, ինչի հետևանքով են դրանք առաջացել /գործարանային թերություններ են, տևական շահագործման հետևանքով առաջացած, կամ

կրծքավանդակի փակ, բութ վնասվածքի, աջից՝ 4-5-րդ կողոսկրերի կոտրվածքների ձևով, պատճառվել են՝ բութ առարկաների ներգործությամբ, հնարավոր է՝ որոշմամբ նշված ժամկետում, որոնք իրենց համակցությամբ առողջությանը պատճառել են՝ միջին ծանրության վնաս, առողջության տևական քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող հետևանքների տևողությունը քանմեկ օրից ավելի: Համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ Անյա Եղիազարյանի մոտ ախտորոշվել է նաև ձախ ոլոքի միջկոճային բարձրության հնացած պոկումային կոտրվածք, ինչը տվյալ դեպքում ենթակա չէ դատաբժշկական գնահատականի: Եթե հետագայում փորձաքննվողը ներկայանա ԴԲԳԳԿ և ի հայտ գան նոր տվյալներ, ապա հնարավոր է «Հետևություններ» - ում լինեն փոփոխություններ...>>: 107

12.06.2018թ. քննչական բաժին է ստացվել փորձագետի թիվ 1108 եզրակացությունը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ եզրակացությունը հիմնավորված չէ, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել նշանակել նոր փորձաքննություն:

Նախաքննության ընթացում պարզվել է նաև, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի դասախոս Ավգեն Գասպարյանը տիրապետում է հատուկ մասնագիտական գիտելիքների նշված փորձաքննությունն իրականացնելու համար:

27.06.2018թ. որոշմամբ Ա.Գասպարյանը ճանաչվել է փորձագետ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք էական նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ հոդվածների պահանջներով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1) Սույն քրեական գործով նշանակել լրացուցիչ դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել փորձագետ Ավգեն Արմենակի Գասպարյանին՝ վերջինիս նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2) Փորձագետի լուծմանն առաջադրել ներքոհիշյալ հարցերը՝

- Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 30 շենքի 1-ին մուտքի առկա վերելակը գործարանային արտադրության է, թե՝ ոչ, եթե այո ինչ ապրանքանիշի է, որ երկրի և տարեթվի արտադրության, որքան ժամանակ է տեղադրված եղել:
- 2017թ. Դեկտեմբերի 1-ի դրությամբ պիտանի եղել է նպատակային շահագործման համար, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի թերություններ է ունեցել, ինչի հետևանքով են դրանք առաջացել /գործարանային թերություններ են, տևական շահագործման հետևանքով առաջացած, կամ

103

- Կա՞ն արդյո՞ք վերելակի կառուցման, տեղադրման կամ շահագործման մեջ սխալներ, թերություններ, համապատասխանում է արդյոք այն տեղադրման ու շահագործման համար նախատեսված ստանդարտներին /պահանջներին/, թե՛ ոչ, որոնք են շեղումները և ում կողմից են դրանք թույլ տրվել:
- Եթե կան թերացումներ /սխալներ/, ապա դրանք գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ տեղի ունեցած միջադեպի հետ, թե՛ ոչ:
- Սույն դեպքով տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումներ թույլ տրվել են, թե՛ ոչ, եթե այո, ապա ինչպիսի և ում կողմից, տվյալ պահին ով էր պարտավոր պահպանելու այդ կանոնները և ով է հանդիսացել դեպքի համար պատասխանատու անձը:
- Կա՞ արդյո՞ք պատճառահետևանքային կապ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների և Անյա Եղիազարյանի կողմից մարմնական վնասվածքներ ստանալու միջև:
- 2017թ. Դեկտեմբերի 1-ի դրությամբ վերելակի դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեն և դրա շղթան եղել են սարքին կամ խափանված, թե՛ ոչ, եթե այո, ապա ինչպիսի թերություններ են հայտնաբերվել և ինչի արդյունքում են դրանք գոյացել:
- Ով կամ ովքեր են պատասխանատու վերելակի դռների էլեկտրական բլոկավորման հպակների վիճակի հսկման ռելեյի և դրա շղթայի սարքին լինելու համար, և տվյալ դեպքում, երբ է վերանորոգվել կամ փոխվել ռելեն և դրա շղթան:
- Վերելակի սպասարկումն իրականացնող մասնագետները կարող էին արդյո՞ք տեսնել ռելեյի հետագա շահագործման անթույլատրելիությունը:

3) Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք կարևոր նշանակություն կունենան դեպքի իրական հանգամանքները և որպես մեղադրյալ ենթակա անձի արարքը որակելու համար և կմտնեն փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

4) Փորձագետին տրամադրել սույն որոշման օրինակը, իսկ դեպքի վայրը քրեական գործի նյութերը կտրամադրվել համապատասխան միջնորդությամբ:

**Ավագ քննիչ** _______________ **Ա.Մ.Մաթևոսյան**